Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. սեպտեմբերի 08-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման և վերաբաշխման վերաբերյալ

2020 թվականի սեպտեմբերի 08-ից մինչև դեկտեմբերի 23-ը ընկած ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել ընդհանուր 6115,042 դրամի չափով հիմնական միջոցներ, նույն թվում համայնքային խնդիրների ահազանգման մեկ հարթակ 1 ծրագիր՝ 1800.0հազար դրամ արժեքով, տպիչ սարք 3 հատ՝ 351.0 հազար դրամ արժեքով, տեսահսկման համակարգ՝ 1150.0 հազար դրամ արժեքով, հոսանքի կարգավորիչ 2 հատ 53.0 հազար դրամ արժեքով, գրադարանային ֆոնդի համալրման նպատակով 500.0հազար դրամի գրականություն և թիվ 5 մանկապարտեզի համար գույք 2261,042 դրամ արժեքով:

Ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվել է գույքի հաշվառման մատյաններում, ներառվել է հաշվապահական հաշվեկշռում որպես հիմնական միջոց:

Ստացված հիմնական միջոցները անհրաժեշտ է բաշխել ըստ անհրաժեշտության՝ համայնքային խնդիրների ահազանգման մեկ հարթակ 1 ծրագիրը, տպիչ սարքը 3 հատ, տեսահսկման համակարգը, հոսանքի կարգավորիչը 2 հատ ՝ Մասիսի քաղաքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ին:

Թիվ 5 մանկապարտեզի համար ձեռք բերված գույքերը հաշվեկշռից- հաշվեկշիռ հատկացնել մանկապարտեզին համաձայն հավելված 1-ի, որից 25000դրամից ավել արժեքով ձեռք բերված գույքերը՝ օգտագործման իրավունքով որպես հիմնական միջոց, իսկ մինչև 25000 դրամ արժեքով գույքերը հատկացնել մանկապարտեզին սեփականության իրավունքով:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան